ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2013 թվականի N 621-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2013 թ. հունիսի 20
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13-ի N 621-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ գործակալություն) պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատելու կարգը:

2. Գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից, սույն կարգով ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր իշխանության, Հայաստանի Հանրապետության դատախազական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամը (այսուհետ՝ դիմող մարմին):

(2-րդ կետը լրաց. 05.05.16 N 455-Ն)

3. Դիմող մարմինը տեղեկություններն էլեկտրոնային եղանակով պարբերաբար ստանալու համար գրավոր դիմում է ներկայացնում գործակալություն:

4. Դիմումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում դիմող մարմնին գործակալության տեղեկատվական համակարգին միանալու համար տրամադրվում է համապատասխան մուտքի անուն, գաղտնաբառ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև անվտանգության սարք:

5. Դիմող մարմինը պարտավորվում է տեղեկատվական համակարգից օգտվել բարեխղճորեն, ստացված տեղեկատվությունն օգտագործել իր պաշտոնական լիազորությունների իրականացման շրջանակում, չշրջանցել համակարգից օգտվելու ծրագրային սահմանափակումները:

6. Դատական իշխանության մարմինները գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են

դատարանների էլեկտրոնային կառավարման համակարգի և e-register համակարգի միացման միջոցով տեղեկությունների ստացման դեպքում, ինչպես նաև դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատարանի համապատասխան որոշման հիման վրա տեղեկությունները պահանջելու դեպքում:

6.1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում է նաև Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստրի և e-register համակարգի միացման միջոցով տեղեկությունների ստացման դեպքում:

(6.1-ին կետը լրաց. 09.06.16 N 592-Ն)

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 9-ի N 1125-Ն որոշմամբ հաստատված մասնավոր անձանց խմբերն ազատվում են գործակալությունում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից՝ պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով սահմանված կարգով ինքնաշխատ եղանակով ստանալու դեպքում:

(հավելվածը լրաց. 05.05.16 N 455-Ն, 09.06.16 N 592-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Վ. Գաբրիելյան**